Ռափայել Պատկանյան

Վանեցի գեղջուկի տաղը

Աղոթարանը բացվեցավ, ժամանակ է զարթելու.
Էրթամ ախոռ, գոմշուկներրս լրծեմ՝ գութան վարելու:
Դ՛եհ, գոմշուկներ, ելե՛ք, ելե՛ք, արտը էրթանք աշխատինք.
Հարկ ու խարճի վատեն մոտ է. վոթենք արուն ու քրրտինք:

Հայի գութա՛ն, հայի գութա՛ն, որի՞ համար կը ջանաս,
Ո՛վ քեզիմով կը տանջրվի, որի՞ն դու կուշտ հաց կուտաս:
Այն օր, երբ քեզ ձեռքրս առի՝ ազատ օրրս կորուցի,
Անվախ սիրտրս վրհատեցավ, հոգիս թուրքին մատնեցի:

Բա՛վ է, գութան, մեր տանջանքը, համբերությունն վերջ ունի,

Դուն տեսա՞ր, որ մեր դուշմանը ամոթ, խելք ու գութ չունի:
Արի՛ փրշրեմ ես քու խոփը, տանք դարբինին կռելու,
Կրռենք-կոփենք սուր ու սուսեր՝ դուշմանի դեմ կռվելու:

Եղբարք հայեր, առե՛ք խոփը, տվե՛ք դարբինին կրռելու.
Կրռել-կոփել սուր ու սուսեր՝ Հայաստանը փրրկելու: